Տ. ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

(ավազանի անունը՝ Գոռ)

Ծնվել է 1977 թ. նոյեմբերի 28-ին Արմավիր քաղաքում:

1993 թ. Արմավիրի թիվ 1 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանն ավարտելով՝ ընդունվել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարան:

1995 թ. հանձնելով 10-րդ դասարանի ավարտական քնությունները Գյումրիի Անանիա Շիրակացու անվան թիվ 16 միջնակարգ դպրոցում՝ սրացել է ավարտական վկայական:

1996 թ. ավարտելով Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանը՝ ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան, որն ավարտել է 2001 թ.:

2001 թ. դեկտեմբերի 25-ին՝ Սուրբ Մրեփհաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2002 թ. հուլիսի 8-ին աշխատանքի է նշանակվել Մայր Աթոռում որպես հյուրընկալի օգնական, ապա 2003 թ. ապրիլ 22-ից՝ հյուրընկալ:

2004 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Փիլարտոս Վարաժնունու իշխանությունը և Հոնիի Կաթողիկոսությունը» թեմայով:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի տոնին, ձեռամբ Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր: